In response to a similar statement by Aliyev on May 27, the Armenian Foreign Ministry said that “ambitions for the sovereign territory of the neighboring state, the use of force to achieve these goals call into question the sincerity of Azerbaijan’s intentions to achieve peace in the region.”

“Moreover, the Armenian side believes that the security of Nagorno-Karabakh cannot be taken separately from the peace talks”. The Foreign Ministry said.

## USC Tacori Research Methods Workshops Expand in Armenia



The USC Institute of Armenian Studies is on a mission to provide the tools and resources necessary for students, instructors, and researchers in Armenia to enrich their work and integrate more deeply into global academic systems, including universities, conferences, and publications.

In April 2022, professors and researchers from three universities in Armenia gathered for phase one of a three-day hybrid seminar (remote & live) on research methods. The purpose was not only learning about best practices in research methods but also learning to teach research methodology to their own students. Weeks later, the same professors passed on their knowledge and skills and led their own training sessions for master’s level students from all over Armenia and Artsakh.

“The continuity, sequence of topics, conducted over two sessions is multiplying the program’s impact by not just training students, but training the instructors who will be teaching hundreds of students,” said Institute Associate Director Syuzanna Petrosyan.

How is this done? Dr. Artineh

Samkian, an Associate Professor at the USC Rossier School of Education whose Ph.D. is in Social Research Methodology, from the UCLA Graduate School of Education and Information Studies, is the Institute’s leading partner in this endeavor. At the same time, on the ground in Armenia, Dr. Naira Sahakyan, a lecturer at both American University of Armenia and Yerevan State University and a researcher at the Genocide Museum-Institute, coordinates the selection of participating instructors and students.

“Dr. Samkian not only teaches research techniques, but she also specializes in teaching how to teach, how to relay information, how to formulate a curriculum,” Petrosyan said.

The master’s students, who are from Yerevan, Etchmiadzin, Vanadzor, and Stepanakert, come from a variety of academic backgrounds and are at a crucial point in their academic trajectories. The range of research interests include post-Soviet education in Armenia, Turkey’s soft power, access to healthcare in the country, Qatar’s foreign policy in the Caucasus, Armenia within Russia-Azerbaijan relations, and much more.

# 2022

## AEBU SCHOLARSHIP PROGRAM

### APPLICATIONS NOW OPEN

Through June 30, 2022

EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE



To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.



**ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION**  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

626•344•7321  
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

# ԷՋԵՐ ԶՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴ



1887-ին ժընեւ կը գտնուէին Աւետիս Նազարբէկեան, Մարօ Վարդանեան եւ քանի մը ուրիշ ուսանողներ, որոնց մէջ իրենց հայրնաւորութեամբ եւ յեղափոխական գաղափարներով աչքի կիցնային Ռուբէն Խանազատ եւ Գաբրիէլ Կաֆեան: Ասոնք կը պատրաստուէին եւ Մոնթիպելիա երթալ եւ հետեւիլ գիւղատնտեսական գիտութիւններու, երբ կը հանդիպին Նազարբէկ-Վարդանեան գոյգին: Այս գոյգը իրենց մտածողներով եւ գաղափարներով մեծապէս կը տպաւորեն ժընեւի ուսանողները: Չորսն ալ կ'որոշեն հաստատուիլ ժընեւ, թէ՛ ուսանելու եւ թէ՛ ազգային-յեղափոխական գործին նուիրուելու համար:




ՍՈՑ. ԴԵՄ. ԶՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ՝ ՆԱԶԱՐԲԵԿ, ՄԱՐՕ, ԽԱՆԱԶԱՏ, ՂԱՐԱՉԵԱՆ, ԿԱՖԵԱՆ, ՄԱՆՈՒԼԵԱՆ, ԱՖՐԻԿԵԱՆ

Աւետիս Նազարբէկեան իր բազմակողմանի զարգացումով, մարքսիստական դաստիարակութեամբ, արուեստագէտ-բանաստեղծ ի խառնուածքով, հոետորական ձիրքով եւ գեղեցիկ արտաքինով, կը հանդիսանար այս խմբակին ոգին ու ղեկավարը: Մարօ Վարդանեան, բացի ուսուցչական յեղափոխական կեանքի եւ գրականութեան մասին ունեցած իր լայն ծանօթութիւններով, ունէր նաեւ յեղափոխական փոքր անցեալ մը:

Ասոնք գիտակից էին այն իրողութեան, որ եթէ Փորթուգալեանի «ԱՐՄԵՆԻԱ»-ն դարձած էր փնտռուած թերթ մը եւ երիտասարդութիւնը յափշտակութեամբ կը կարդար, ատոր գլխաւր պատճառը այն ոգեշունչ յօդուածներն էին, որ կը ստորագրէին Ա. Նազարբէկ (Լեւոնց), Մ. Շահագիգեան (Կորան) եւ ժընեւի խումբին միւս անդամները:

Ինը հոգի կը հաշուէր իր անդամներու թիւը, կ'որոշէ հրաժարիլ համագումարի գաղափարէն, փութացնել թերթի մը հիմնադրումը եւ յեղափոխական երիտասարդութեան համախմբումը անոր շուրջ: Առ այդ՝ կ'որոշուի կազմել ապագայ ընկերութեան ծրագրի նախագիծը, որուն պատրաստութեան գործը կը յանձնուի Ա. Նազարբէկին, Մարօ Վարդանեանին:

Թիֆլիսի գիմնազիոնը ավարտելէ վերջ ան կը մեկնի Պետերբուրգ ուսումը շարունակելու համար: Բայց հոն ոգեւորուած յեղափոխական գաղափարներով, կը մտնէ ուսուցչական խումբերու մէջ: Հետապնդուելով ցարական ուստիկանութեան կողմէ, Մարօն կ'անցնի ֆարիզ: Հոս է որ կը ծանօթանայ Նազարբէկին եւ կը նշանուին:



Ժընեւի խումբին հետզհետէ Մոնթիպելիայէն եւ այլ տեղերէն կու գան միանալ քանի մը նոր երիտասարդներ՝ Մատթէոս Շահագիգեան, Քրիստափոր Օհանեան, Պողոս Աֆրիկեան, Գէորգ Ղարաջեան, Մ. Մանուչարեան եւ Մ. Մանուէլեան:

Ընկերական հանդիպումներու, վիճաբանութիւններու առանցքը կը կազմէր Հայաստանի ազատագրութեան հարցը եւ հետզհետէ հրատապ բնոյթ կ'առնէր հայ յեղափոխականներու ընդհանուր համագումար մը հրաւիրելու պահանջը: Այդ ուղղութեամբ խմբակի կողմէ Ա. Նազարբէկեան կը դիմէ Մ. Փորթուգալեանին, որպէս արդէն ճանչցուած հրապարակախօս եւ ազգային գործիչ, որ նախաձեռնարկ ըլլայ այդ գործին:

Ասոնք ոչ միայն կը դադրեցնեն իրենց աշխատակցութիւնը, այլ նաեւ կը վերադարձնեն թերթը եւ կը մերժեն կարգալ գայն: Ա. Նազարբէկ՝ «Հայակուլ Քամեւիոնը» խորագրով գրքոյկ մըն ալ կը հրատարակէ, լրջօրէն կասկածի տակ դնելով Փորթուգալեանի հայրկենականութիւնը: Ժընեւի խումբը, որ արդէն

ներքին, որից աւելին իր ուղջ գոյութեան ժամանակ նա էլ պէտք չունենայ: Այս քաղաքական անկախութեան համար յանրապետի համարուիլով այն անհրաժեշտ արջամտեղից մէկը, որի իրազեկումը յետոյ միայն բացուի է ապարդիւ հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կեանքի մէջ մտցնելու համար մի կրկնայ շարք հիմնադր. արեւմտական վերածարգումներու քաղաքական անկախութեան իրազեկումը յետոյ հայ ժողովրդը պէտք է դիմէ իր ղեկի կեանքի անխափ կերպով, որոնց գոյութեան ամենքը է իրազեկումը ազատ լինի ու մենք իրար հասարակ ու կարգը ճանաչելու, որոնց գոյութեանը համարուիլով այդ խնդրը և պատերազմը այդ խնդրի համար:

Փորթուգալեան «ԱՐՄԵՆԻԱ»-ի մէջ հրապարակելով Նազարբէկի առաջարկը, ծանօթագրութեամբ մը կը պատասխանէր թէ չի կրնար հնտեանք տալ անոր, որովհետեւ ինք արդէն նման միութիւն մը կազմելու վրայ է եւ որուն կանոնագրութիւնը շուտով պիտի հրատարակուէր:

նին եւ Գ. Ղարաջեանին: Ժընեւի խումբին բոլոր անդամները, ինչպէս տեսանք, ուսուցանուած էին, որոնք ջերմապէս խանդավառուած էին ուսական յեղափոխութեան գաղափարաբանութեամբ եւ անոր յախուռն գրծունէութեամբ: Ժընեւի մէջ անունք մշտապէս յարաբերութեան մէջ էին եւ մօտէն շփուած ունէին հոն գտնուող Նարոտնիկներու եւ Պլեխանովականներու հետ: Հայ երիտասարդները

ըր կը խանդավառուէին մէկ կողմէ Նարոտնիկներու ահաբեկչական յախուռն գործունէութեամբ, եւ կ'երագէին գայն փոխադրել Հայաստան եւ հոն կիրառել միեւնոյն մեթոտները՝ թուրք բռնակալութեան դէմ, միւս կողմ է ալ՝ Մարքսիզմը իր նոր վարդապետութեամբ, իր գիտական հիմունքներով անոնց միտքին ու տրամաբանութեան կը խօսէր: Մէկը կ'ազդէր անմիջականօրէն ենթակայի զգացումին, միւսը՝ մտքի ու դատողութեան:

Այդ երկու ազդեցութիւնները հաւասարապէս իրենց արտայայտութիւնը կը գտնեն Հնչակեան նախնական ծրագրին մէջ:

Հոս կը նախընտրենք խօսքը տալ Լէօին (\*):

- «Ժընեւում ապրող հայ ուսանողներից կազմուած մի փոքրիկ խմբակ, 1887-ին հիմք դրեց մի փոքրիկ պարբերականի հրատարակութեան, տալով նրան ՀՆՉԱԿ անունը, որին վիճակուած էր մի մեծ հռչակ:

«Նրա կանոնադր հրատարակութիւնը սկսում է 1887 թուին, որին եւ մենք սխալուած չենք լինի, եթէ յատկացնենք հայ տարեգրութիւնների մէջ խոշոր դարագլխային նշանակութիւն (էջ 145):

«Իր բովանդակութեամբ այդ թերթը նոր՝ իր նմանը չունեցած երեւոյթ էր հայութեան մէջ: Յեղափոխութիւն՝ յենուած սոցիալիզմի վրայ: Ահա թէ ինչ էր նրա սրբութիւնը սրբոցը:

«Իր այս ուղղութեամբ ՀՆՉԱԿը մի գնահատելի փաստ է, նույնիսկ ոչ յատուկ թրջահայ հարցի տեսակէտից, այլ առհասարակ հայ հասարակական մտքի զարգացման տեսակէտից:

«Առաջին երեք-չորս տարիների ընթացքում թերթը երկարօրէն զբաղուել է գաղափարախօսական հարցերով, ընդարձակ յօդուածների մէջ արծարծելով կրկնատնտեսական մերձեցումներն ու հիմնաւորումները: Այս է կարեւորը: Ինչ էլ ասելու լինենք այդ տեսական հայեցքների արժեքի մասին, դարձեալ իրողութիւնը կը մնայ այն, որ ՀՆՉԱԿի էջերում հայ հրապարակախօսութիւնը սկսել է իր մայրենի լեզուով թոթովել «սոցիալիզմ», «կապիտալիզմ» համարադիպային թերմիւնները, ծանօթացնելով նրանց հետ՝ հայ ընդհանրութեան դէմ անվարժ տիրացուական միտքը, փորփրել նրա թանձր գանգուածը եւ մտցնել նրա մէջ կարմիր, յեղաշրջիչ հասակացողութիւններ՝ շահագործողների եւ շահագործուողների մասին:

«Այս բոլորը շատ լաւ էր, շատ թարմ, շատ նոր: Եւ այս բոլորը, անշույտ, անուրանալի ծառայութիւն էր, որ ժընեւում սաղմնաւորուած շարժումը՝ անուանենք նրան այս գլխից ՀՆՉԱԿԵԱՆՈՒԹԻՒՆ՝ մատուցանում էր հայ ժողովրդական գործին դրական, շինարար մի ծառայութիւն:» (էջ 148):

(\*): ԼԵՕ. Թրքաշայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը \*\*\*\*\* Ս.Դ. Հնչակեան Պատմութիւն Ա. Հատոր

# Անցեալ Դարակէսի Առաջին Տարիների Արուեստը Մայր Հայրենիքում (Երեք Այնարկ)

## ԳԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

### Ա. «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՅԻ ԲԵՍԱԳՐՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԸ

1952 թուական: Հայ ժողովուրդը պատրաստուած է արժանի ձեւով նշել Արմէն Տիգրանեանի «Անուշ» օպերայի առաջին բեմադրութեան 40-ամեակը: Օպերային թատրոնը տենդազին փորձերի մէջ է: Օպերայի գլխաւոր հերոսուհու՝ Անուշի դերակատարուհին փառաբանուած երգչուհի Հայկանուշ Դանիէլեանն է, իսկ Սարոյի դէրը վստահուած է այդ դերի առաջին դերակատար Շարա Տալեանին:

Եղբայրս՝ Արսէնը Շարա Տալեանի մտերիմ բարեկամներէն էր: Թէեւ քսան տարեկան՝ նա կարողացել էր գրաւել նշանաւոր երգչի սիրտը: Եղբայրս հիանալի ձայն ունէր: Որ նրան չտեսնէիր, այլ միայն լսէիր՝ քեզ կը թուար թէ Շարա Տալեանն է երգում: Եղբայրս այնքան էր տարուած երգչի արուեստով, որ աշխատութիւն գրեց նրա մասին, որը լոյս տեսաւ 1956-ին: Հիանալի լսողութիւն, ուրիշ բացառիկ զգացողութիւն, զեղեցիկ բարիտոն, ահա եղբորս երաշխական տուեալները:

Իմ երաժշտական գործունէութեան ընթացքում բազմիցս փորձեցի նրան կատարողական լայն ասպարէզ հանել, սակայն բնութիւնից իրեն վերապահուած քաջուածութիւնն ու ամաչկոտութիւնը (նոյնը՝ հայրիկիս մօտ էր) պատճառ դարձան, որ նա անուանի երգիչ չդառնայ:

Եւ այսպէս, օպերային թատրոնում գիշեր-ցերեկ ընթանում են «Անուշ» օպերայի փորձերը: Արսէնը ամբողջ օրը երգչի հետ է: Յանձինս Արսէնի, երգիչն հաւանաբար տեսնում էր իր արուեստի ապագայ շարունակողին ու հօր պէս հոգ էր տանում նրա մասին:

«Անուշ» օպերայի ներկայացման համար երկու տոմսակ ապահովել էր Շարա Տալեանը: Ես, 15 տարեկան պատանի, անչափ երջանիկ էի ու հպարտ, որ ներկայ եմ լինելու կառավարական ներկայացմանը: Ինձ համար մի նոր աշխարհ էր բացուել, գրաւիչ, հրապուրիչ մի աշխարհ, երաժշտական գոյների մի հսկայ համաստեղութիւն, որի մէջ էր թեւածում իմ հոգին: Երիտասարդ գոյգերի դժբախտ սիրոյ պատմութիւնը ինձ տարել էր երկնային թագաւորութեան մի աշխարհ, ուր միայն ընտրեալները կարող են հանգրուանել:

Եկաւ օպերայի այն պահը, երբ Մոսին սպաննում է Սարոյին: Հոփիւնները ուսամբարձ, բեմից դուրս են բերում Սարոյի անշնչացած մարմինը: Որոտանման պայթում է երաժշտութիւնը: Ես չկամ, վերացել եմ, կոկորդս չորացել է: Յանկարծ սկսում եմ փղձկալ, եղբայրս փորձում է հանգստացնել ինձ՝ ոչինչ չի ստացւում, սկզբում մեղմ, յետոյ սկսում եմ բարձրաձայն հեկեկալ: Այստեղից-այնտեղից լսում են բողբոջի ձայներ, լուէք, դուրս տարէք երեխային:

Տեսնելով, որ լացս չեմ կարողանում դադարեցնել, եղբայրս երկար շարքերի միջով ինձ դուրս բերեց սրահից:

Ես հետագայում պիտի անդրադառնայի, որ ինձ սպանիչ յուզումի պատճառը ոչ այնքան բեմադրուած տեսարանն էր, որքան Արմէն Տիգրանեանի ցնցող, հանճարեղ երաժշտութիւնը:

Ես չգիտէի, որ տարիներ անց, 1996-ին ինքս էի Տիգրանեանի «Անուշ» օպերան համերգային կատարմամբ ներկայացնելու Լոս Անձելոսում, մինչ այդ երկար ժամանակ տրամացրելով օպերայի երաժշտութեան գործիքաւորմանը, օգտագործելով կլաւիրը (դաշնամուրային տարբերակ), միաժամանակ լսելով օպերայի ձայնագրութիւնը:

### Բ. ԵՐԳԻՉ ԱՐՄԵՆԱԿ ՏԵՐ ԱՐԱՐԱՅԱՍԵԱՆԸ ԵՒ ԿՈՍՏՏԱՍԻ «ԿՈՒՆԿ»-Ը

Առաջին անգամ Կոմիտասի «Կուունկ» երգը լսեցի մայրիկիս կատարմամբ, երբ ընդամէնը 4-5 տարեկան էի: Հայրիկս ռազմաճակատում էր: Ամէն երեկոյ, անկողին մտնելուց առաջ, ես, եղբայրս եւ մայրս ծնկի էինք գալիս Յիսուսի պատկերի առջեւ, խնդրելով Աստուծոյ, որպէսզի ողջ առողջ վերադարձնի մեր հայրիկին: Խաչակնքելուց յետոյ, մայրիկս հազիւ լսելի ձայնով երգում էր «Կուունկ»-ը:

Այն յուզումնալից պահը, որ ինձ պարզեցեց մոռացութեան տրուած երգիչ Արմենակ Տէր Աբրահամեանը՝ ես ութ տարեկան էի: Մեր տան պատից կախուած խաւաքարտէ ռադիոյից տաղանդաւոր երգիչը կատարում էր Կոմիտասի «Կուունկ»-ը:

Անմասն երգիչն էր, որ իմ հոգու մէջ բորբոքեց այն հուրը, որի շնորհիւ առաջին անգամ հաղորդակցուեցի երաժշտութեան աշխարհի կախարդական հնչիւնների հետ: Փաստորէն Կոմիտասեան երաժշտութիւնը դարձաւ այն մղիչ ուժը, որով ձեւ ու մարմին ստացաւ իմ երաժշտական մտածողութիւնը, որի շնորհիւ էլ դարձայ այն, ինչ որ եմ այսօր:

Դժբախտաբար մեծանուն երգիչը, ինչպէս շատեր, իր արժանի գնահատանքին չի արժանացել, սակայն նա եղաւ իմ առաջին «ուսուցիչը», որի կատարման վարպետութիւնն ու երգացանկը ինձ սիրելի տուին հայկական ժողովրդական, աշուղական երաժշտութիւնն ու քաղաքային երգը:

Մենք անձնապէս ծանօթ չենք եղել: Ես նոր էի ընդունուել երաժշտական ուսումնարան, երբ նա իր մահականացուն կնքեց 1957-ի աշնանը: Ես փոքրաթիւ մարդկանց մէջ էի, որոնք եկել էին նրա յուզարկաւորութեանը: Շատ քիչ մարդ կար գերեզման գնացող, ես նրանց թուում էի: Ինձ ծանօթ որեւէ երաժիշտ, կամ հանրաժանօթ արուեստագետ նոյնպէս: չկար թաղման ժամանակ:

Կարծես մարդը ոչ եղել էր, ոչ էլ կար: Ընտանեկան պարագաների բարի ու զարմացական հայեացքի ներքոյ, որպէս ընտանիքի հարազատ անդամ, կանգնեցի փոսի գլխին մինչեւ դազաղն իջեցրին նրա մէջ: Յետոյ մի բուռ հող լցրի դազաղի վրայ ու առանց որեւէ մէկի հետ հաղորդակցուելու, մեծ գործ արած մարդու նման քայլերս ուղղեցի դէպի

տրամվայի կանգառը: Արմենակ Տէր Աբրահամեանը ամրապնդեց իմ սէրն ու հետաքրքրութիւնը Կոմիտասի երգարուեստի նկատմամբ: Եւ վաղ տարիքից սկսեալ սկսեցի «պեղել» նրան:

Պեղելու արդիւնքում շատ բան սովորեցի նրանից, յատկապէս՝ հայկական ժողովրդական երաժշտութիւնը բազմաձայնի վերածելու նրա արուեստից: Այնուհետեւ «համարձակուեցի» մշակել «Կուունկ» մեներգը՝ մենակատարի եւ քառաձայն երգչախմբի համար: Տարիներ առաջ այն կատարուել է Լոս Անձելոսում, որից յետոյ Հայաստանում՝ վաղամեռիկ շնորհալի խմբավար Մարիկա Եղիգարեանի ղեկավարութեամբ:

### Գ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՖԻԼՄԵՐԻ ՍՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

1950-ի առաջին մի քանի տարիներին զգալի աշխուժութիւն երեւաց Հայաստանի մշակութային կեանքում: Սկսեցին երեւան գալ արտասահմանեան ֆիլմեր: Դրանցից առաջինը՝ ամերիկեան «Տարզան» ֆիլմն էր, որը իսկական յեղափոխութիւն առաջ բերեց ողջ խորհրդային երկրում:

Մարդիկ տեսան, հասկացան, որ քարոզչական, պատերազմական ֆիլմերից բացի, կան նաեւ մարդկային արժէքներ գովերգող ֆիլմեր նոյնպէս: Ամերիկեան «Տարզան» ֆիլմը երեւանում ցուցադրուեց օրեր, ամիսներ շարունակ:

Մարդիկ ժամերով հերթի էին կանգնում տոմսակ ձեռք բերելու համար: Աւելին՝ ըստ սրահի աթոռների քանակի՝ ցուցակներ էին կազմուում: Արաբկիրի միակ կուլտուրայի տանը «Տարզան»-ի իրար յաջորդող ներկայացումներն (սեանսներ) սկսուում էին առաւօտեան ժամը տասից եւ անընդմէջ ցուցադրուում էին մինչեւ կէսգիշեր: Շատեր գործ-բան թողած, ընկած էին «Տարզան»-ի ետեւից: Հայրիկս, որ բնաւ մշակութային օճախ չէր յաճախել, ինքն էլ մասնակից դարձաւ ֆիլմի ընտանեկան դիտումին:

Մեծով-պգտիկով ամբողջ Հայաստանը դիտեց «Տարզան»-ը:

Աֆրիկեան ջունգլիներում ծաւալուող Տարզանի եւ Ջէյնի սիրոյ պատմութիւնը գերում էր իւրաքանչիւր դիտողի: Սիրուց ծնուած Ջակի շարաճճիութիւններն ու արկածներով լի կեանքը չիմպանզէ ցեղի Չիտա անտառով կապիկի հետ, մարդկանց մոռացնել էր տալիս անհաճոյ աւօրեան, անցեալը, պատերազմն ու նրա բերած աւերները, մարդկային կորուստներն ու անմեկնելի զրկանքները:

Բնութեան հրաշալի պատկերներով յագեցած «Տարզան» ժապաւէնը մարդկանց դարձրեց բարի, հաճոյակատար:

Մենք ամբողջ ընտանիքով դիտեցինք նաեւ այդ տարիներին ֆիլմի Միջազգային հրապարակում անուն հանած հնդկական «Թափառաշրջիկը» ժապաւէնը, որին յաջորդեց «Պարոն 420» ֆիլմը: Այդ երկու ֆիլմերի գլխաւոր դերակատարը, բեմադրիչը, նիւթի եւ երաժշտութեան հեղինակը միեւնոյն անձն էր, որի անունն էր Ռաջ Կապուր: Անհնար է նկարագրել ողբերգութեան եւ վայելքի այն հաճելի օրերն ու ամիսները, որոնցով համակուած

էր հասարակութիւնը: Հնդկական ֆիլմերը տասնամեակներ շարունակ ցուցադրուեցին Երեւանի կինոթատրոններում: Երեւանցիներին քաջածանօթ Նժդէհի հրապարակի Սեւան կինոթատրոնը, որպէս օրէնք, մշտապէս ցուցադրում էր հնդկական ֆիլմեր:

Խորհրդային վարչակարգի ծանր վարագոյրը իջնում էր գէթ երաժշտութեան եւ ֆիլմարուեստի ասպարէզում: Դանդաղօրէն, բայց ապագայի հաստատուն տեսլականով սկսեցին արտասահմանեան հայ եւ օտարազգի նշանաւոր արուեստագէտների եւ արտիստների անուններ երեւալ օպերային թատրոնում եւ Հայֆիլհարմոնիայում: Արդէն նկատելի էր իտալական, ֆրանսիական եւ եւրոպական այլ երկրների ֆիլմերի առկայութիւնը Երեւանի կինոթատրոններում:

Աներեւակայելի ուժգնութեամբ իմ հոգին տակնուվրայ արեց ֆրանսիական «Փառքի նախերգանքը» ֆիլմը, որը նուիրուած էր ֆրանսիացի երիտասարդ դիրիժոր Ռոբերտօ Բենցիի կեանքին ու դիրիժորական արուեստին: Հիմնականում փաստացի տուեալների վրայ հիմնուած այդ կինոժապաւէնը, այդ օրերի համար իսկական գլուխ-գործոց էր: Երաժշտական գործերի ընտրութիւնը եւ դրանց բարձրորակ կատարումը այսքան տարիներ անց, մնացել է իմ յիշողութեան մէջ:

«Փառքի նախերգանքը» ֆիլմը իսկական յեղափոխութիւն առաջ բերեց իմ հոգում եւ դարձաւ որոշիչ՝ իմ ճակատագրի յետագայ որոշման համար:

Ֆիլմի մասին աւելի ընդգրկուն պատկերացում ունենալու համար, ցանկացայ մէկ անգամ էլ դիտել այդ ժապաւէնը: Յաջորդ օրը նորից գնացի Մոսկուա կինոթատրոն, բայց չուսախաբ եղայ: Ֆիլմը հանուած էր ցուցադրումից: Կինոթատրոնի հսկիչները ոչ մի յստակ պատասխան չկարողացան տալ ինձ, նոյնիսկ հասկացնել տուին, որ իրենց համար այնքան էլ հաճելի չէ այդ նիւթին անդրադառնալը:

Առ այսօր ինձ համար անհասկանալի է մնացել, թէ ինչու՞ մէկ օր, այն էլ միայն երկու անգամ ցուցադրուած ֆրանսիական «Փառքի նախերգանքը» ֆիլմը հանուեց ցուցադրութիւնից: Ամէն պարագայի կարելի է ենթադրութիւններ անել:

Յետպատերազմեան տարիներին, Խորհրդային երկրում ցուցադրուող միայն ու միայն քարոզչական, հիմնականում պատերազմական թեմաներ արծարծող ու մուգ գոյներով յագեցած ֆիլմերի կողքին ցուցադրուող «Փառքի նախերգանքը» ժապաւէնը բոլորովին «ուրիշ աշխարհից» էր, այլմոլորակային մի լուսաշող արբանեակ, որը լայնօրէն ցուցադրուելու պարագային կը հակադրուէր խորհրդային ֆիլմերի որակի հետ ու միանգամայն ցցուն կերպով կ'երեւար որակի տարբերութիւնը:

«Փառքի նախերգանքը» ֆիլմի հերոս, դիրիժոր Ռոբերտօ Բենցին, դիրիժորութեան հետ մէկտեղ, իր ատլետիկ մարմնի ու գեղեցիկ տղամարդ լինելու շնորհիւ ամբողջ կեանքում նկարահանուել է ֆրանսիական բազմաթիւ ֆիլմերում:

Ներկայիս նա 85 տարեկան է եւ ապրում է Ֆրանսիայում:

Every man is guilty for the good he did NOT do!  
Թէ Ինչո՞ւ էս Ե՞րբ Ծնունդ Առաւ  
Նիւ Եորթի Հայ Մանկավարժի Մրցանակը

Անուրանալի ճշմարտութիւն է թէ որակաւոր մանկավարժներուն կը պարտինք ապագայ սերունդին առողջ դաստիարակութիւնը: Մայրերու եւ Ուսուցիչներու կը պարտինք մեր գաւակներուն դաստիարակութիւնը, բարոյական արժէքներու պահպանման կարեւորութիւնը ծրոյ սերունդին հոգիներէն ներս:



Կայծակի արագութեամբ միտք մը փայլատակեցաւ մէջս, որ այս գումարը պէտք է յատկացուի յատուկ նպատակի մը - ստեղծել հիմնադրամ մը, որուն տոկոսէն ... հոգ է թէ փոքրիկ գումարով մը - նիւթական գնահատանք մը ներկայացնել արտասահմանի մէջ ՀԱՅԵՐԻՆ լեզու դասաւանդող ուսուցիչին տարեկան վճարական քաշման հանդէսի ընթացքին:

Թէ ի՞նչն էր դրդապատճառը այս որորշուծին-պատմեմ ձեզի:  
Ասկէ, մի քանի տարի առաջ հանդիպեցայ 1957-ի ՄԻՋՆԱՐԵՐԴԻ Սարգիս Սահակեանի գրիչով խոստովանութիւն մը: Ուր Պարոն Սահակեան կը գրէր թէ...

«1923-էն ի վեր աշխատակցած եմ, հնարաւորութիւններուն սահմանին մէջ, արտասահմանի հայերէն գլխաւոր դրական հանդէսներուն ու եզրապատահայ օրաթերթերուն ալ անխտիր՝ գրական մտահոգութիւններէ միայն առաջնորդուած:

Ամբողջ այս ժամանակաշրջանին անգամ մը միայն շիջեալ «ՆՈՐ ԳԻՐ»-ի պատուական խմբագիրը՝ Բենիամին Նուրիկեան, (1894-1988) ինքնաբերաբար 8 տոլար դրկած է ինծի իբրեւ աշխատավարձը:

Կ'ընդունիք անշուշտ, թէ այս գումարով կարելի էր ամբողջ 35 տարի ապրիլ, տուն պահել եւ գաւակներ մեծցնել: Պէտք է մեղադրէք զիս, հետեւաբար, եթէ խոստովանիմ, թէ «գրական աշխատանքներէ դուրս» կը զբաղիմ հաշուակալութեամբ եւ ուսուցչութեամբ, թէ եւ այս վերջինը՝ ուսուցչութիւնը, կարելի է գրական աշխատանք համարել, քանի որ կ'աւանդեմ հայերէն եւ հայ գրականութիւն ու անհամար անհամար շարադրութիւններ կը սրբագրեմ»:

Հասած ենք 2022 թուականանցած է 65 տարի այդ խոստովանութեան:

Քաջ գիտակից ենք որ մեր բոլոր կազմակերպութիւնները, եկեղեցիները նիւթական նեղ պայմաններու մէջ ըլլալով շատ յաճախ նամակներով եւ անձնական հեռաձայներով բարերար կը փնտռեն: Բայց այդ հաւաքուած գումարներէն ոչինչ կը հասնի Հայ Մանկավարժի տարեթոշակի յաւելում մը տալու: Տարիներու ընթացքին զգացած եմ ու ես իմ մէջս ընդվզած՝ նման անտարբերութեան ... աւելի ճիշդ անարդար վերաբերմունքին համար:

Երբ մի քանի տարի առաջ վերջնականապէս թոշակի անցայ Նիւ Եորթի Սրբոց Նահատակաց Ամէնօրեայ վարժարանի Տնօրէնութեան պաշտօնէն, վարժարանին յիսնամեակն էր... (2017) միաժամանակ իմ ալ Հալէպի կրթասիրաց վարժարանէն ներս ուսուցչութեան սկսելու 50 տարին բոլորած եղայ:

Բարի գուգադիպութեամբ մը իմ առաջին տարուայ երախտապարտ աշակերտներէս... Գաբրիէլ Չենպերճեանը - որ կեանքի ասպարէզին մէջ բացառիկ յաջողութիւն գտնելով գնահատանքի ժեստով մը ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ամերիկեան տոլար դրկեց ասպարէզիս մէջ ՅԻՍՈՒՆ Տարի բոլորած ըլլալս շնորհաւորելով:

Ուրախ եմ որ գանազան առիթներով եղան նաեւ այլ առատաձեռն նուիրատուութիւններ, որոնց կարգին անցեալ տարի լոյս տեսած իմ անդրանիկ գիրքիս... ԱԶԷԶԷՆ ԱՄԵՐԻԿԱ - հատորին ի պատիւ եղած նուիրատուութիւնները, այսօր մայր գումարը հասցուցին աւելի քան \$1000 հազար տոլարի:

Անցնող չորս տարիներուն ընթացքին Սրբոց Նահատակաց Ամէնօրեայ վարժարանէն չորս նուիրեալ մանկավարժներ ստացան այդ մրցանակը:

Յարգ չորս նուիրեալներ արժանացան այս մրցանակին, որոնց անունները ամէն տարեշրջանի աւարտական հանդէսի գրքուկին մէջ կը նշուի այս ձևով...

Տիկնայք՝ Հուրի Ղուկասեան-2019, Անի Մանուէլեան-2020, Մարո Ժամկոչեան-2021, Սօսի Նիկոտէլեան- 2022:

Բիւր յարգանք իւրաքանչիւրին նուիրումին, Մեսրոպեանի նուիրեալներուն, արեւմտահայերէնը մեր նոր սերունդին շրթներէն հնչեցնող հայրերիներուն վարձքը կատար:

Անոնք որոնք կը փափաքին այս հիմնադրամին միջոցաւ քաջալերել հայ մանկավարժը իրենց գնահատական փողգիրը (տրագրծ գումարը) առաքել հետեւեալ հասցէին - փողգիրին վրայ գրելով -

ACEF-HMADS Chemberjian-Boghosian-Armenian Educator Fund -in the memo section please add: In Honor of Zarminé Boghosian You may mail your contributions to the following address:

Mrs© Zarminé Boghosian- 1495 Country Club Drive, Springfield, PA 19064-

Or: Holy Martyrs Armenian Day School-HMADS 209-15 Horace Harding Exp© Oakland Gardens, NY 11364

For further inquiries you may e-mail zarminekb@yahoo.com

Երախտագիտութեամբ եւ խորին գնահատանքով՝  
Հարմինէ Պողոսեան

ՓԹԻԹ-ի Կայքին Բարեփոխումն Ու Փթուները

ԳԻՏԵՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԾԱՂԻԿՆԵՐԸ  
Գարունը շատ-շատերու ամենէ սիրած եղանակն է: Ասոր պատճառները շատ են. մեզմ եւ հաճելի եղանակը, բնութեան զարթօնը եւ այլն: Կարեւոր պատճառ մըն է նաեւ բնութեան մէջ գոյններու, երանգներու զանազանութիւնը եւ զայնով տարածուող անուշ բոյրը, որոնք կը պարտինք բոլորամասէտ ու գոյնզգոյն ծաղիկներուն, ըլլան անոնք մշակուած՝ յատուկ պարտեզներու մէջ, ըլլան վայրի տարածուած ազատ բնութեան մէջ:



Համավարակի պարտադրած նոր ապրելակերպը եւ առցանց ուսուցումի կիրարկումը ապացուցեցին, որ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի(ԳԿՀ-ՀԲ) որդեգրած ուղղութիւնը՝ արեւմտահայերէնի զարգացումը իրականացնել գանազան առցանց նորարար ծրագիրներով, տեղին ու իրաւացի էր: Կրթական նոր ծրագիրներու եւ մանաւանդ երիտասարդներու նորարար մօտեցումներուն արեւմտահայերէնով ստեղծագործելու ջանքերը քաջալերելու քաղաքականութեան մէջ ներառուեցաւ նաեւ ՓԹԻԹ մանկապատանեկան կայքի վերանորոգումն ու աշխուժացումը:


Թուաբանական եւ այլ բնոյթի խաղեր:

Ելեկտրոնային ՓԹԻԹ-ը, տպագիր տարբերակին առընթեր, շարունակեց փթթիլ, կիրարկումով փոխներգործուն խաղերու՝ յատուկական յաւելեալ հնարքներով: ԳԿՀ-ՀԲ-ի շարունակական նիւթաբարոյական քաջալերանքով բազմազան հերթական թարմացումները եւ ՓԹԻԹ վերածուեցաւ զոյգ Ամերիկաներէն միջնէ Մայրագոյն Արեւելք փնտռուած կայք մը: Ըստ համակարգչային վիճակագրական տուեալներու, ՓԹԻԹ-ի կայքի այցելուներու թիւը հասած է շուրջ 122,000-ի, իսկ ՓԹԻԹ-ի յաւելուածի ներբեռնողներու թիւը՝ շուրջ 48,000-ի: Համավարակի առցանց ուսուցումի ժամանակամիջոցին ՓԹԻԹ-ի կայքը եւ մանաւանդ լեզուական խաղերն ու պատմական քննարկ յաճախ օգտագործուեցան բազմաթիւ սփիւռ. քահայ վարժարաններու հայրենական ուսուցիչներուն կողմէ իբրեւ առցանց ուսուցումի յարմար միջոց:

2010 թուականին թիւ 0 փորձառական համարով հրապարակ իջած ՓԹԻԹ մանկապատանեկան պարբերաթերթը 2015-ի վերջաւորութեան ունեցաւ իր ելեկտրոնային առաջին տարբերակը՝ կայքը, իսկ 2016-ին երկրորդը՝ բջջային հեռախօսներու յաւելուածը, շնորհիւ ԳԿՀ-ՀԲ-ի պատասխանատուներուն ամբողջական նեցուկին: Եռամսեայ հերթականութեամբ եւ անվճար՝ հայ մանուկին ու պատանիին հասանելի կը դառնայ ՓԹԻԹ-ի կայքը [www.e-ptit.com](http://www.e-ptit.com) եւ յաւելուածը PTIT-ՓԹԻԹ:

Համավարակի տարածումին ու շարունակումին առընթեր, ՓԹԻԹ-ի խմբագրութիւնը եւ ԳԿՀ-ՀԲ-ի պատասխանատուները, յարմարելու համար նոր զարգացումներուն, նախաձեռնեցին ՓԹԻԹ-ի


ԿՐՆԱՄ ԿԱԶՄԵԼ ԱՌԱՃԸ  
Իրաքանչիւր բոլորակի մէջ տառերը դասաւորելով կազմէ բառը, ապա տեղադրելով քառակուսիներուն մէջ, կազմէ ասացումը: Իրաքանչիւր բոլորակի կեդրոնի տառը բառին սկզբնատան է:



ՓԹԻԹ իր փորձառական համարին լոյս տեսած օրէն նպատակադրած էր սփիւռ. քահայ նոր սերունդին մէջ քաջալերել հայերէն ընթերցասիրութիւնը եւ հարստացնել անոր առօրեայ խօսակցութեան բառամթերքը՝ մատուցելով բարոյական բովանդակութեամբ պատմութիւններ, առակներ, առողջապահական գիտելիքներ, իրենց տարիքին յարմար ժպիտներ, հանելուկներ եւ մանաւանդ լեզուական,

կայքի աշխուժացումին, ծրագրելով հիմնական բարեփոխումներ, գլխաւորաբար պարունակական (երեք նոր բաժիններու յաւելում), որակային եւ ձեւաւորումի բարեփոխումներ, որոնք մեկնարկեցին 5 Մայիս 2022-ին: Այսուհետեւ, ՓԹԻԹ-ի կայքի իւրաքանչիւր թարմացում պիտի ունենայ յատուկ թեմա մը, եւ այդ թեմային

### Աշխարհի Բաժակի 2026-ի Քաղաքները ԱՄՆ-ի, Գանատայի եւ Մեքսիկայի Մեջ



Ֆուտպոլի Միջազգային Համադաշնակցութիւնը (ՖԻՖԱ) հաստատած է 2026-ի Աշխարհի Բաժակի քաղաքները: Եզրափակիչ մրցաշարը համատեղ կը կազմակերպեն ԱՄՆ-ն, Գանատան եւ Մեքսիկան:

ԱՄՆ-ի մէջ հանդիպումները տեղի կ'ունենան Աթլանթայի, Պոսթոնի, Տալլասի, Հիւսթընի, Քանասաս Սիթիի, Լոս Անճելոսի, Մայամիի, Նիւ Եորքի/Նիւ ձրքիի, Ֆլորատեյթիայի, Սան Ֆրանսիսքոյի եւ Սիեթլի մէջ:

Մեքսիկայի խողերը կ'ընդունեն մայրաքաղաք Մեքսիքոն, Գուադալախարան ու Մոնթրերէյը:

Գանատայի մէջ աշխարհի առաջնութեան քաղաքները կ'ըլլան Թորոնթոն ու Վանքուվըրը:

Առաջին անգամ եզրափակիչ մրցաշարին կը մասնակցի 48 հաւաքական: 16 խումբերուն մէջ կ'ընդգրկուի 3-ական խումբ:

### Քոսթա Ռիքան Նուաճեց Աշխարհի Բաժակի Վերջին Տոմար



Քոսթա Ռիքայի հաւաքականը նուաճեց ֆուտպոլի Աշխարհի Բաժակի եզրափակիչ մրցաշարի վերջին տոմարը:

Քաթարի մէջ կայացած միջ-մայրցամաքային ընտրական փլեյ-օֆֆի խաղին Քոսթա Ռիքայի խումբը մրցեցաւ Նոր Զելանտայի հետ եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով: Միակ կողմ խաղի երրորդ վայրկեանին նշանակեց իրեն Բեմփբլը:

Նոյեմբերի 21-էն Դեկտեմբերի 18-ը Քաթարի մէջ կայանալիք Աշխարհի Բաժակի աւարտականներուն հասած են նաեւ Արժենթինի, Պրագիլի, Էկուատորի, Ուրուկուայի, Կանայի, Մարոքոյի, Սենեկալի, Քամերունի, Թունիզի, Իրանի, Քաթարի, Սէլտեան Արաբիոյ, Հարաւային Քորէայի, Ճաբոնի, Աւստրալիոյ, Գանատայի, ԱՄՆ-ի, Մեքսիկայի, Անգլիոյ, Պելճիգայի, Գերմանիոյ, Դանիայի, Սպանիայի, Հոլանտայի, Լեհաստանի, Փորթուկալի, Սերպիայի, Ֆրանսայի, Խորուաթիայի, Զուիցերիոյ եւ Կալէսի (Ուելս) հաւաքականները:

### Ռոնալդուն Մտադիր Զէ Զեռանալ «Մանչըսթըր Եունայթըտն»

Անգլիական «Մանչըսթըր Եունայթըտի» 37-ամեայ փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալդուն մտադիր չէ այս ամրան փոխել ակումբը: Անոր պայմանագիրը մանչեսթերեան ակումբի հետ նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը, եւ Ռոնալդուն տրամադրուած է աշխատանքի նաեւ նորանշանակ հոլանտացի գլխաւոր մարզիչ Էրիկ Տեն Հազի հետ, կը հաղորդէ Sky-ը:

Նախապէս անգլիական մամուլը գրած էր, որ Ռոնալդուն չի համապատասխաներ Տեն Հազի մարտավարութեան ու պատկերացումներուն: «Ռոմայի» փորթուկալացի գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրիյիսին կը ցանկայ Ռոնալդունին տեսնել իր ղեկավարած խումբին մէջ: Երկու փորթուկալացիները միասին աշխատած են Մատրիտի «Ռեալի» կազմէն ներս:

Անցած մրցաշրջանին Ռոնալդուն «Մանչըսթըր Եունայթըտի» հետ մասնակցած է 38 հանդիպման, նշանակած է 24 կոլ, կատարած 3 կոլային փոխանցում:

### «Ինթեր» Հաստատած Է, Որ Պայմանագիր Կնքած Է Միխայիլ Զետ



Իտալական «Ինթերի» գլխաւոր տնօրէն Զուլգայէ Մարոտան հաստատած է, որ ակումբը պայմանագիր կնքած է երկու ազատ գործակալի հետ: Խօսքը դարպասապահ Անտրէ Օնանայի ու կիսապաշտպան Հենրիխ Միխայիլեանի մասին է:

«Ինթերի» ղեկավարը նշած է, որ ակումբը արդէն պայմանագրեր ստորագրած է Հենրիխ Միխայիլեանի եւ դարպասապահ Անտրէ Օնանայի հետ, կը փորձէ ակումբ բերել յարձակողներ Ռոմելու Լուկակուին եւ Պաուլօ Դիբալային:

### «Պորուսիան» 33 Միլիոն Եւրօ Առաջարկած Է «Այաքսի» Լաւագոյն Ռմբարկուին Համար

Տորթմունտի «Պորուսիան» կը փորձէ ձեռք ձգել Հոլանտայի ախոյեան Ամսթըրտամի «Այաքսի» եւ Քոստ Իլուարի հաւաքականի յարձակող Սեբաստիան Ալբերին: Գերմանական ակումբը 27-ամեաձ ֆուտպոլիստի համար առաջարկած է 33 միլիոն եւրօ: «Այաքսը» տեղափոխման համար կ'ակնկալէ 38 միլիոն եւրօ:

2019-2021-ին ան հանդէս եկած է Լոնտոնի «Ուեստ Հեմի» կազմին մէջ: 2021թ. Յունուարին «Այաքսը» Սեբաստիան Ալբերի տեղափոխման համար վճարած էր 22,5 միլիոն եւրօ:

Անցած մրցաշրջանին Ալբեր դարձաւ «Այաքսի» լաւագոյն ումբարկուն՝ մասնակցելով 31 հանդիպման, նշանակեց 21 կոլ:

### «Լիվերփուլի» Եւ Մոհամետ Սալահի Բանակցութիւնները Արդիւնք Զեն Տուած

Անգլիոյ փոխախոյեան «Լիվերփուլի» եւ խումբի յարձակող Մոհամետ Սալահի բանակցութիւնները պայմանագրի երկարաձգման հարցով արդիւնք չեն տուած:

30-ամեայ եգիպտացի ֆուտպոլիստի պայմանագիրը «Լիվերփուլի» հետ նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը: Սալահ չի ցանկանար երկարաձգել այն, որպէսզի յաջորդ ամրան ստանայ ազատ գործակալի կարգավիճակ եւ կախուածութիւն չունենայ յաջորդ խումբի ընտրութեան հարցին մէջ:

Սալահը 2017 թուականէն հանդէս եկած է «Լիվերփուլի» խումբէն, որու հետ անցած մրցաշրջանին մասնակցած է 51 հանդիպման, նշանակած՝ 31 կոլ, կատարած՝ 16 կոլային փոխանցում: Ան ճանչուած է Փրեմիեր Լիգայի անցած մրցաշրջանի լաւագոյն ֆուտպոլիստ:

Սալահի տեղափոխման արժէքը կը գնահատուի 100 միլիոն եւրօ:

### Զիտան. Կը Ցանկան Շարունակել Մարզչական Գործունէութիւնս

Մատրիտի «Ռեալի» նախկին գլխաւոր մարզիչ Զիտանը Զիտանը մտադիր է վերսկսել մարզչական գործը:

«Ես կը ցանկան շարունակել մարզչական գործունէութիւնս: Ես դեռ ունիմ այդ կրակը, ֆուտպոլը իմ կիրքն է: Ես 50 տարեկան եմ, կայացած եմ, երջանիկ եմ, եւ այս է ամենագլխաւորը», - Զիտանի խօսքը կը մէջբերէ AFP-ն:

Յաջորդ խումբի մասին մեկնաբանութենէն ֆրանսացի մասնագէտը հրաժարած է: 2021թ. ամրանը Արքայական ակումբէն հեռացած Զիտանին հրաւիրելու ցանկութիւն ունի փարիզեան ՊՍԺ-ն:

### «Ռեալ» Կ'երկարաձգէ Պայմանագիրը Բենգեմայի Հետ

Սպանիոյ ախոյեան եւ Ախոյեաններու Լիգայի գաւաթակիր Մատրիտի «Ռեալը» կ'երկարաձգէ պայմանագիրը աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի յարձակող Քարիմ Բենգեմայի հետ:

34-ամեայ ֆուտպոլիստի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը: Արքայական ակումբը Բենգեմային կ'առաջարկէ համագործակցութեան երկարաձգում մինչեւ 2024թ. Յունիս:

Անցած մրցաշրջանին Բենգեման «Ռեալի» հետ բոլոր մրցաշարերուն մասնակցած է 46 հանդիպման, նշանակած է 44 կոլ, կատարած 15 կոլային փոխանցում:

### ՄԱՅԱԶՊ



**ՕՇԱՆՆԷՍ ՍԷՐՈՐԵԱՆ**  
(Ծնեալ՝ 24 Փետրուար 1944ին, Լիբանան)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝ ՕՇԱՆՆԷՍ ՍԷՐՈՐԵԱՆԻ անակնկալ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 3 Յունիս 2022ին, անոր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան եւ թաղման արարողութիւնները պիտի կատարուին Երկուշաբթի, 27 Յունիս 2022ին, առաւօտեան ժամը 9ին, Mission Hills Catholic Mortuary գերեզմանատան մէջ, 11160 Stranwood Ave., Mission Hills, CA 91345, (818) 361-7387:

#### Սգակիրներ՝

- Այրին՝ Ժագլին Սէրօրեան
- Որդին՝ Արա Սէրօրեան
- Դուստրը՝ Ալին եւ Սեւակ Սաղտճեան
- Թոռները՝ Շահէ, Տիրան եւ Ժողէֆ Սաղտճեաններ
- Քոյրը՝ Հովհաննէս Երիքեան
- Քրոջ գաւակները՝ Ժուլիէթ Հէրմեզեան
- Լենա եւ Ժողէֆ Տէր Սահակեան եւ գաւակները (Լիբանան)
- Ռիթա եւ Վարուժան Աթաշբարայեան եւ գաւակները (Լիբանան)
- Վիոլէթ Թերզեան եւ գաւակները (Աթլանթա)
- Եղբայրը՝ Նշան եւ Սալբի Սրուրեան
- Եղբոր գաւակները՝ Արմէն եւ Լորիկ Սրուրեան եւ գաւակը Տանիէլ եւ Միշէլ Սրուրեան
- Մայքըլ Սրուրեան
- Քենին՝ Անի եւ Գրիգոր Զարուկեան եւ գաւակները
- Քենիի որդիները՝ Էսմոնտ եւ Գարէն Զարուկեան եւ գաւակները
- Շահէ եւ Յասմիկ Զարուկեան եւ գաւակները
- Աներորդին՝ Գրիգոր եւ Մոնիք Քէքլիքեան եւ գաւակները՝ Փիեռլին եւ Թալի
- Խնամիները՝ Շաքէ Սաղտճեան
- Հրայր Սաղտճեան
- Սէմ եւ Նայիրի Գասաճիքեան եւ գաւակները
- Եւ համայն Սէրօրեան, Սրուրեան, Քէքլիքեան, Զարուկեան, Երիքեան, եւ Գասաճիքեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել AIM FUND-ին կամ ArmenianIMF.org-ին

### ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՊՕՅԱՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կատարուեցան «Մասիս» շաբաթաթերթին:

- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Օսան Տազսեան \$300
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Քաթիա Խոտանեան \$200
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան \$100
- Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան \$100
- Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուզճեան \$100
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեան \$100
- Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան \$100

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հանգուցեալ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՊՕՅԱՄԵԱՆԻ մահուան առիթով Պոյամեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին, այցելութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակներով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:

Առ այդ \$500 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

### ՓԹԻԹ-Ի Կայքին Բարեփոխումն Ու Փթումը

Շարունակուած էջ 13-էն

առնչուած ամբողջական գիտելիքներ պիտի պարզուէ իր այցելուներուն:

Մինչ այդ, ՓԹԻԹ-ի տպագիր տարբերակը, որ դադարած էր 2020-ին թիւ 17 համարի հրատարակու-

մով, նոր շունչ մը ստացաւ ՀՀ-ի Կրթութեան, Գիտութեան, Մշակուցի եւ Սպորտի նախարարութեան նախաձեռնութեամբ պաշտօնակազմի անդամներու կողմէ: Երեւանի մէջ լոյս ընծայելու յատուկ համար մը, Հայրենիք հաստատուած եւ արեւմտահայերէնով արտայայտուող մասնաւորա-

### ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

ԱՆԱՔԵԼ ՏԻՐՃԵԱՆ ԿԱՐԿՈՒՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կատարուեցան «Մասիս» շաբաթաթերթին:

- Տիկ. Ազատուհի Մուրաֆեան (Պաթոն Ռուժ) \$100
- Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Նորա Մուրաֆեան (Պաթոն Ռուժ) \$100
- Տէր եւ Տիկ. Սագօ եւ Հուրիկ Մուրաֆեան (Պաթոն Ռուժ) \$100
- Տէր եւ Տիկ. Chad եւ Մարալ Elwood (Պաթոն Ռուժ) \$100
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան \$200
- Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուզճեան \$100
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան \$100
- Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան \$100
- Տէր եւ Տիկ. Կարօ Ղարիպեան \$100
- Տէր եւ Տիկ. Աւօ Ղարիպեան \$100
- Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Ղարիպեան \$100
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Քնար Պողարեան \$100

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԱՆԱՔԵԼ ՏԻՐՃԵԱՆ ԿԱՐԿՈՒՏԵԱՆԻ մահուան առիթով Տէր եւ Տիկ. Վարդիվառ եւ Նայիրի Կարկուտեան եւ որդին ճանի-Եփրեմ Կարկուտեան իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին, այցելութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակներով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:

Առ այդ \$500 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին եւ \$500 Հ.Մ.Մ.ին:

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հանգուցեալ ՆԱԶԱՐ ՍԱՂՊԱԶԱՐԵԱՆԻ մահուան առիթով Սաղապարեան ընտանեկան պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին, այցելութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակներով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:

### Արցախի Խնդիրը Խաղաղապահներին

Շարունակուած էջ 2-էն

ղակիորէն՝ այլ կերպ ասած դիւանագիտորէն կը բերի նաեւ խաղաղապահներին պատասխանատուութեան խնդրի շօշափմանը, իսկ լայն իմաստով էլ, թերեւս՝ կը լինի Արցախի սուբիեկտութեան պատասխանատու դրսեւորում:

Արցախում կայ օրինակ խորհրդարան, որի պատգամաւորները գերակշռող մասը կարող է Հայաստանի ներքաղաքական կեանքին այս կամ այն կերպ «ծառայելու» փոխարէն, ծառայել Արցախի պետական-հասարակական կեանքին եւ քննարկել օրինակ Փարուխի իրադարձութիւնները, քննելով ոչ թէ խաղաղապահներին, այլ նրանց հետ գործակցելու եւ ընդհանրապէս Արցախի անվտանգութեան հետ կապուած իրողութիւններին պատասխանատու կառույցներին, դրանց դեկավար եւ այլ պաշտօնեաների գործունէութիւնը: Երբ Արցախում

ձեւաւորուի այդ շրջանակում պատասխանատուութեան վերահսկողութեան յստակ մեխանիզմ, ապա դանակակաճ իր թէկուզ անուղղակի, բայց «ձգող ազդեցութիւնը կ'ունենայ նաեւ խաղաղապահներին վրայ, իսկ այդ հանգամանքն էլ իր հերթին իր ազդեցութիւնը կը թողնի Արցախի սուբիեկտային ներուժի միջազգային ընկալման խնդրի վրայ: Օրինակ, եթէ Արցախի ԱԳ նախարարը նշում է, որ Փարուխի դէպքը հարուած էր նաեւ խաղաղապահներին, Արցախի խորհրդարանը կարող է քննել, թէ ո՞ր կառույցն ու պաշտօնեան են աւելորդ «դիւրահաւատութեամբ» կամ «անգործութեամբ» ու «անփութութեամբ» կասկածի տակ դրել Արցախի անվտանգութիւնն ու շփման գծի ամրութիւնը, եւ այդ կերպ նաեւ նպաստել, որպէսզի հարուածի տակ յայտնուեն խաղաղապահները:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

բար հալէպահայ եւ պէյրութահայ պատանիներուն ուղղուած: Խանդավառութեամբ եւ ոգեւորումով սկսած աշխատանքը գուզահեռ ընթացաւ արցախեան 44-օրեայ պատերազմին հետ: ՀՀ Կրթութեան Գիտութեան Մշակուցի եւ Սպորտի նախարարութեան հովանաւորութեամբ եւ Յովհաննէս Թումանեանի անուան տուն-թանգարանի տնօրէնութեան գործակցութեամբ հրատարակուած ՓԹԻԹ-ի այդ յատուկ համարը լոյս տեսաւ 2020 Նոյեմբերին տխուր ու ճնշիչ մթնոլորտի մը մէջ: Ոչ ծանուցում, ոչ ալ արժանի շնորհանդէս կատարուեցաւ: Սակայն մնաց յոյսը՝ շարունակելու կատարուած յաջող այս փորձը:

ՓԹԻԹ-ի խմբագրութիւնը կը հաւատայ ազնիւ նախաձեռնութիւններու յարատեւումի ջանադրութեան: Կը յուսանք որ ՓԹԻԹ պարբերաթերթը կարելիութիւնը պիտի ունենայ շարունակելու իր առաքելութիւնը Սփիւռքի թէ Հայաստանի մէջ: Նաեւ կը մաղթենք որ ԳԿՀ-ՀԲ-ի ամբողջական հովանաւորութեամբ հրատարակուած ելեկտրոնային յաւելումները եւ բարեփոխուած կայքը կը շարունակեն իրենց առաքելութիւնը իբրեւ փոքրիկ օղակ մը այն մեծ շղթային, որ ԳԿՀ-ՀԲ-ը, իր այլազան ծրագրերով կազմած է ի խնդիր արեւմտահայերէնի պահպանումին ու զարգացումին:

*Հովանավորությամբ՝*

*Ս. Դ. Հ. Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի  
Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան  
135-Ամյակի Նուիրուած՝*

# **ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱԳԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ**

**ARMENIAN NATIONAL & ETHNOGRAPHIC SONGS**

*Sponsored by: **S. D. H. P.** Western American Committee*

*Dedicated to 135<sup>th</sup> Anniversary*

*With the participation of:*

**Մասնակցությամբ՝**



**ԱՌՆՈ ՄԿՐՏՉԵԱՆ**  
**ARNO MKRTCHYAN**



**ՅԱՐՈՒԹ ՅԱԿՈՒՅԱՆ**  
**HARUT HAGOPYAN**

*The event will take place on  
Saturday, June 25, 2022,  
Starting from 7:00 p.m.  
At AEBU Center*

*Տեղի կ'ունենայ Շաբաթ Յունիս 25, 2022-ին  
Երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ  
Հ.Կ.Բ.Մ.-Ի շքեղ սրահէն ներս՝  
1060 N. ALLEN AVE., PASADENA, CA 91104  
Տեղերը ապահովելու համար՝ Հեռ. 626-429-2815*

*Մուտքի նուէր՝ \$75*